ԳՐԻԳՈՐ ՋԱՆԻԿՅԱՆ



# ՈԳՈՒ ՈՒԺՆ ՈՒ ՀՄԱՅՔԸ

ԺՈՂՈՎՈՒՐԴՆ իր մեծ զավակներին, որոնք իր հույսերի, հույզերի անխարդախ արտահայտիչն են, **ազգային** տիտղոսն է տալիս:

Ռաֆայել Իսրայելյանը Թամանյանին հաջորդած ամենաազգային հայ ճարտարապետն է: Նրա ողջ ստեղծագործությունը քարե համանվագ է, փառերգ իր երկրին, ժողովրդին, բնությանը: Մեր գերարդյունաբերականացած՝ երկնաքերերի, բետոնի ու ապակու դարում նա շարունակեց խոսեցնել քարը, խոսեցնել հայերեն: Հենց այդ պատճառով նրան հասկացան բոլոր ժողովուրդները: Հասկացան ու սիրեցին:

Ո՞վ գիտե, պատահականությո՞ւն էր, թե՞ զուգադիպություն: 1936 թվականին Երևանում, օպերայի շենքի շինարարությունը անգամ չավարտած, մահանում է Ալեքսանդր Թամանյանը: Այդ նույն թվականին Լենինգրադի գեղարվեստից կաճառի վկայագրով Երևան էր ժամանում մի նորավարտ ճարտարապետ: Նա մեր քարագործների պես ջլապինդ էր, արևախանձ, ուներ սուր, պրպտող հայացք: Ճարտարապետը փայլուն գնահատականներով էր վերջացրել ուսումնառությունը, չնայած ավարտական աշխատանքը պաշտպանելիս հանդիպել էր դժվարության: Դասախոսները ոչ մի կերպ չէին հասկացել, թե նա ինչու է նախագծի վերևում մեծ-մեծ տառերով հայերեն գրել «Ջա՜ն, Ղարաբաղ, ջա՜ն, արև, ջա՜ն, ծաղիկներ, ջա՜ն, սարեր»: Եվ երբ հարցրել էին, թե որտեղ է ուզում աշխատանքի անցնել, երդումի պես պատասխանել էր.

— Ապրել միայն Հայաստանո՛ւմ, աշխատել Հայաստանի՛ համար...

Չէ՛, հայրենիքում հարազատ կամ մտերիմ չուներ: Նախնիները սերում էին Արցախից, ինքը ծնվել, հայկական կրթություն էր ստացել Թիֆլիսում: Այնուամենայնիվ, Հայաստանում իրեն մենակ, օտար չէր զգում: Տեղացիներից լավ գիտեր երկիրը: Ուսանողական տարիներին, գրեթե ամեն արձակուրդի, ուսապարկի մեջ թուղթ, մատիտ, մի քիչ ուտելիք էր դնում, հայրենիք գալիս: Ոտքո՛վ էր շրջում լեռներն ու հովիտները, պատմական ամեն հուշարձանի մոտ օրեր անցկացնում, որովհետև արևը, նայած դիրքին, լույսի ու ստվերի խաղին, կառուցողական նոր-նոր հրաշքներ էր բացահայտում: Բացահայտում էր նախնիների հանճարը: Այդ ուղևորություններից մեկի ժամանակ էր, որ այն ակնածանքով, որով եկեղեցիներին էր նայում, նայել էր օպերայի բակի փայտաշեն տնակից ներս, ուր աշխատելիս էր եղել Ալեքսանդր Թամանյանը: Նայել, նայել ու չէր համարձակվել մեծ վարպետին գծագրերից կտրել, մի բառ անգամ ասել: Հետո, իհարկե, ափսոսում էր դրա համար ու մեծարելու ավելի ծանրակշիռ բառ չգտնելով, ողջ կյանքում Թամանյանին «հանճար» էր կոչում...

Ասում են, երբ հայրերը մահանում են, որդիները շուտ են մեծանում: Թամանյանի մահից հետո Իսրայելյանը, թերևս, մի պահ իրեն որբացած զգաց, բայց հետո երդվեց շարունակել, զարգացնել նրա ավանդները: Առիթը շուտ ներկայացավ: Երիտասարդ ճարտարապետին վստահեցին գինու գործարանի կառուցապատումը: Այդ շինության վրա Իսրայելյանն աշխատեց գրեթե ողջ կյանքում և սովորական ձեռնարկությունը, գետնափոր պահեստները դարձրեց ճարտարապետական կոթող, մայրաքաղաքի ամենագեղեցիկ կառույցներից մեկը: «Արարատ» գործարանը քաղաքի կենտրոնի առաջին շենքն է, որ դիմավորում է «Զվարթնոց» օդակայանից ժամանող այցելուին և, բնական է, դառնում յուրօրինակ շքամուտք, այցետոմս:

Ռաֆայել Իսրայելյանը կառույցին հենց այդ իմաստն էլ հաղորդել է: «Հաղթանակ» կամուրջին ուղղված պատը եռակամար դարպաս է հիշեցնում, ընդ որում կամարներից յուրաքանչյուրի մեջտեղը խաղողի, նռան քանդակաշարով գինու սափոր կա: Ճարտարապետն այդպես է արտահայտել մեր ժողովրդի սրտաբացությունը, հյուրին միշտ գինու փարչով, մրգով դիմավորելու սովորությունը: Աշտարակի ժամացույցը, սակայն, հիշեցնում է, որ ամենաթանկը ժամանակն է, և ով ուզում է նպատակին հասնել, ժամանակի զգացողությունը երբեք չպետք է կորցնի: Գինու գործարանը, որի երկարությունը տասնյակ մետրերի է հասնում, ամբողջովին կառուցված է կիսատաշ բազալտով: Ռաֆայել Իսրայելյանը չի ուզել խաթարել շրջապատի համայնապատկերը, բնական գույները: Շենքի պատերը կարծես Հրազդան գետի ժայռերից են նառնում և ձուլվելով նրանց, կազմում կուռ համամասնություն: Հայտնի է, ճարտարապետը պաշտում էր բընությունը, աշխատում իր շինություններն այնպես տեղադրել, որ տեղանքի հմայքը պահպանվի, ակնբախ դառնա: Ավանդույթ, որ դարերից է գալիս...

Լեռների միջով ձգվող ճանապարհ, որ մեր սրբավայրերը՝ Գառնի, Գեղարդ է տանում: Քա՛ր, քա՛ր, քա՛ր: Անսպասելիորեն ճանապարհի եզրին ստիճաններ են նշմարվում, որոնք շեշտակի բարձրանում են բլրի գագաթը: Այնտեղ կառուցված միաթռիչք կամարի՝ ասես ինքնատիպ քարե շրջանակի միջից, իր ողջ վեհությամբ երևում է Արարատը: Տեսարանն այնքան հմայիչ է, որ անհնար է չկրկնել կամարի կորությամբ ճարտարապետի փորագրած տողերը. «Աշխա՛րհ անցիր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա, ինչպես անհաս փառքի ճամփա, ես իմ Մասիս սա՛րն եմ սիրում»: Ամեն անգամ Չարենցի կամարից Արարատը դիտելիս այն զգացողությունն ես ունենում, որ լուռ երևույթին ունենում էին մեր հեթանոս նախնիները, երբ քարե աստիճաններով ելնում էին մեհյաններն ու ծնրադրում աստվածների բագիններին: Ճարտարապետ Ռաֆայելը ստեղծել է

մի այնպիսի մեհյան, ուր մենք փառավորվում ենք, փառաբանում մեր հողը, լեռը, դաշտը... Զուր չէ, որ նա միշտ պնդում էր. «Միայն սեփական խոսքով կարելի է դուրս գալ մեծ ասպարեզ»: Այդ համոզումով շատ կառույցներ նախագծեց, նախագծեց Հաղթանակի կոթողը և ազգային լեզվով նոր խոսք ասաց աշխարհին: Մինչ այդ չասված խոսք: Հաղթակամարներ շատ կան տարբեր երկրներում, բայց երևի չկա այնպիսին, որ միաժամանակ պատվանդան լինի ու թանգարան: Պատահական չէ, ճարտարապետն այն կառուցել է բարձր, դիտարժան բլրի վրա: Իր սլացիկ, վեհաշուք տեսքով Հաղթանակի կոթողը մեր հին տաճարներն է հիշեցնում: Նրա բոլոր պատերը, աստիճանները, դրոշակակիր քիվերը, ջրհորդաններն անգամ ուրույն, միմյանց չկրկնող նախշազարդեր ունեն: Գեղեցիկ է մանավանդ վարդյակազարդ շքամուտքը, որն առաջնորդում է ստորերկրյա, լույսերով ողողված մի աշխարհ: Այնտեղ, իրար հաջորդ սրահները պատմում են Բաղրամյանի, Բաբաջանյանի, հարյուր հազարավոր այն հայ մարտիկների մասին, ովքեր անօրինակ արիությամբ կռվեցին ֆաշիստական ելուզակների դեմ ու հաղթանակի օրը Ռայխստագի սևակնած պատերի տակ Քոչարի պարեցին... Ո՛չ, ճարտարապետը չմոռացավ նրանց, ովքեր զոհվեցին ու հայրենիքում թաղվելու բախտն էլ չունեցան: Հավիտյան պանդուխտ մնացին: Որպեսզի հայ զինվորների ընդհատված կյանքն ինչ-որ ձևով շարունակվի հայրենիքում, Ռաֆայել Իսրայելյանը մի շատ ինքնատիպ հղացում ունեցավ՝ մեկը մյուսի հետևից սկսեց աղբյուր-հուշարձաններ նախագծել: Հիշատակի այդ կոթողները, որոնք համեմատաբար փոքր, բայց գողտրիկ հորինվածքներ էին, պիտի կառուցվեին գյուղերի կենտրոններում, բանուկ ճանապարհների եզրերին, որպեսզի ծարավ անցորդը խմեր լեռների սառցահամ ջուրն ու հնամենի սովորությամբ ողորմի տա՛ր անցավորաց:

Հանրապետության տարբեր անկյուններում, հայաշատ այլ բնակավայրերում մի քանի տասնյակ աղբյուր է ստեղծել ճարտարապետը, որոնք այնպես են ձուլվել շրջակա բնանկարին, որ ասես անձեռակերտ լինեն: Ռաֆայել Իսրայելյանը հրաշալի գիտեր Հայաստանը, գիտեր, թե որտեղ ինչ պետք է կառուցել: Նրա հուշարձանները ոչ միայն գեղեցկացնում, զարդարում են հայրենի հողը, այլև նրա անբաժան մասնիկը դառնում: Հենց դրա համար չէ՞, որ հիացնում են ու դեռ շատ սերունդների պիտի հիացնեն Երևանի հյուսիսային ու հարավային ուղեմուտքերը, Սայաթ-Նովա փողոցի զարդաքանդակները, վերակառուցված Սուրբ Սարգիս եկեղեցին, Զվարթնոցի ու Գեղարդի ուղենիշը, Մուսա լեռան, Ապարանի, Հաճընի հերոսամարտերի հուշարձանները, Հրազդան գետի բազմակամար ջրանցույցը...

Աներևակայելի էր ճարտարապետի աշխատասիրությունը: Առանց դադարի ու հանգստի Իսրայելյանն ստեղծագործել է ողջ կյանքում: Արխիվային թղթապանակների մեջ գծանկարներ կան, որ նա կատարել է համերգների հայտագրերի, անգամ ճաշարանային անձեռոցիկների վրա: Դա նշանակում է, որ մտահղացումները նրան հանգիստ չեն տվել, հետամտել, հորդել են ուղղակի: Այդ համառ, տառապագին որոնումները, որոնք ճարտարապետն էլ հաճախ չգիտեր, թե իրեն ուր են տանում, իմաստ ստացան, երբ ծնվեց Սարդարապատի հերոսամարտին նվիրված հուշահամալիր ստեղծելու գաղափարը: Ռաֆայել Իսրայելյանն այդ ժամանակ միայն հասկացավ, թե ինչո՞ւ էր ինքն անընդհատ արծիվ նկարում, երևակայությամբ զանգակատներ կառուցում: Նա զգաց՝ Սարդարապատի հուշահամալիրն իր համար այն է լինելու, ինչ Տրդատի համար Անիի Կաթողիկեն էր, Թամանյանի համար՝ Կառավարական տունը: Ու քանի որ ողջ կյանքում փաստորեն դրան էր նախապատրաստվել, աշխատեց չափազանց արագ ու ստեղծեց անկրկնելի, մնայուն կոթող: Ստեղծեց իր գլուխգործոցը...

Արարատյան արևով ողողված հարթավայրում, ճիշտ այնտեղ, որտեղ հայ ժողովուրդն այս մի բուռ հողը կարողացավ ոսոխի մագիլներից խլել, զանգաշտարակ է հառնում: Նրա երկու կողմերում հաստաբեստ ցուլեր կան, որոնք խորհրդանշում են հայ ժողովրդի ուժը, կամքը, անկոտրում համառությունը: Դեպի զանգաշտարակ տանող աստիճանները չեչոտ որձաքարից են: Սկզբում ճարտարապետը քարի որակից, պարզ է, դժգոհ էր, բայց ժողովուրդը դրա մեջ անգամ իմաստ տեսավ: Չեչաքարերը թշնամական գնդակների վերքերն էին հիշեցնում. հենց դրանց վրա էլ կառուցվեց հաղթանակի խորհրդանշանը՝ նարնջագույն զանգաշտարակը...

Ժողովուրդը հաղթել է, ճիշտ է, բայց չի կորցրել զգոնությունը: Ճեմուղու ողջ երկարությամբ կողք-կողքի արծիվներ են քարացել, որոնք մարտիկների են նման...

Հուշապատը համալիրը երկու մասի է բաժանում: Օրհասական մարտի խորաքանդակների կենտրոնում բացված կամարից անսպասելիորեն երևում է Արարատը, այնքան մոտ, որ նշմարվում են տառապանքից, կարոտից քարացած նրա կնճիռները: Ռաֆայել ճարտարապետն անընդհատ ձգտել ու գրեթե միշտ հասել է այն բանին, որ իր կառուցած բոլոր հուշակոթողներից Արարատն ու Արագածը երևան: Մեկը որպես կենսահաստատ իրականություն, մյուսը՝ կարոտ ու ձգտում: Լեռան համապատկերը ամբողջացնում են հնագույն այգիները՝ ծիրանի ծառերով ու խաղողի հյութի որթերով: Արարատյան դաշտի այս չքնաղ տեսարանի վրա ճարտարապետը երկու ինքնատիպ լրացում է միայն կատարել: Համալիրի մի մասում տաք գույնի տուֆ քարից կառուցել է «Վարդավառ» սեղանատունը, որն իր հազարաշեն տանիքով, մեծղի կճուճով ներկայացնում է հայ ժողովրդի կենսասիրությունը, իսկ խորքում՝ բերդի նման ուրվագծվող ազգագրական թանգարանը՝ բազմաշնորհ քանքարը: Այսինքն՝ ոսոխը որքան էլ կողոպտել, առևանգել, չի կարողացել սպանել հայ մարդու կառուցելու, ստեղծագործելու, այս ձևով հարատևելու ունակությունը: Ափսո՜ս, ճարտարապետը չտեսավ այդ հոյակերտ շենքը: Նրա մահից հետո ազգագրական թանգարանն ավարտեց որդին՝ ճարտարապետ Արեգ Իսրայելյանը: Ճիշտ են ասում. ճակատագրերը կրկնվում են: Նույնը չպատահե՞ց Թամանյանի հետ, օպերայի շենքի շինարարության ժամանակ:

Իսրայելյանը միայն այս կառույցը չէ, որ անավարտ թողեց: Նա ուրիշ նվիրական երազանք էլ ուներ՝ Ախուրյանի ափին ուզում էր «Անի» դիտարան ստեղծել, որտեղից այցելուները հնարավորություն ունենային տեսնելու մեր հնամենի մայրաքաղաքի կոթողները, նրա անանց փառքի վերջին նշխարները: Լավ է, որ գոնե ծնվում են զավակներ, որոնք ուշ-շուտ իրականացնում են ծնողների իղձերը:

Զուր չէր Ռաֆայել Իսրայելյաննափսոսում, որ ընդամենը հինգ երեխա ունի: Նրա տղաներն ու աղջիկները ճարտարապետ, երաժիշտ, հնագետ, ազգագրագետ ու երկրաբան դարձան, որպեսզի անմնացորդ նվիրվեն իրենց երկրին, ժողովրդին: Նման սերը, պարզ է, հորից է գալիս: Ճարտարապետի հայրենասիրությունը ինքնազոհողության էր հասնում: Մի առիթով նա խոստովանել է.

— Երբ ասում են «Հայաստան», ակամա ոտքի եմ կանգնում...

Եվ նույնիսկ ձոն է նվիրել «Հ» տառին, որովհետև «Հայրենիք», «Հայաստան» նվիրական բառերը դրանով են սկսվում...

Կյանքի վերջին օրը, վերջին պահին, երբ այլևս ուժ չուներ անգամ կոպերը բացելու, անսպասելիորեն հիշեց՝ Նոր Հաճընում կառուցվող հերոսամարտի հուշարձանի մակագրությունը չի գրել: Դժվարությամբ նստեց անկողնում, թղթի վրա հատ-հատ գծանկարեց. «Կոթողս կանգնեցված է ի նշանավորումն սխրագործության անվեհեր հաճընեցի նախնիների, որոնք 1920 թվին իրենց կյանքի գնով տվեցին մեզ փրկություն՝ վերածընվելով հայրենի հողի վրա...»: Վերջակետը դնել չկարողացավ: Գրիչն ընկավ:

Այսպես ավարտվեց այն մարդու կյանքը, որը որդու հավատարմությամբ ու նվիրումով շարունակեց իր հանճարեղ նախնիների՝ Մանվելի, Տրդատի, Գալձագի, Մոմիկի, Սիրանեսի, Թամանյանի, Թորամանյանի գործը:

Ու նրանց պես անմահացավ:











Սարդարապատի ազգագրական թանգարանի շենքը

Երևանի «Արարատ» գինու գործարանի շենքը

Սարդարապատի ազգագրական թանգարանի կենտրոնական ցուցասրահը

Հայրենական մեծ պատերազմում զոհված մարտիկների պատվին կառուցված աղբյուրների հուշահամալիրը Երևանի Խ. Աբովյանի անվան մանկական զբոսայգում

Հաճընի հերոսական ինքնապաշտպանությանը նվիրված կոթողը Նոր Հաճըն ավանում

Սարդարապատի ազգագրական թանգարանի մուտքը





